



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան



« 27 » Եսեպրիլ 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 033 - 24

Ձեռնարկողը՝

«ՄՖ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ

Երևան, Վերին անտառային փ., 2/131, բն.15

Գործունեությունը՝

Հոկտեմբերյանի խմբի ավազակույցնազլաքարային խառնուրդի հանքավայրի Ջանֆիդա տեղամասի 4-A բլոկի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն
Արմավիրի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 033 - 24

ՁԿ > Տարբեր 2024թ.

Արմավիրի մարզի Հոկտեմբերյանի խմբի ավազակոպճագլաքարային խառնուրդի հանքավայրի Զանֆիդա տեղամասի 4-Ա բլոկի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝
Փաստաթղթի տեսակը՝

«ՄՖ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ
Շրջակա միջավայրի վրա ազդեցության
գնահատման հաշվետվություն /ՇՄԱԳ/,
նախագծային փաստաթղթեր

Տեղադրման վայրը՝

Արմավիրի մարզ, Մեծամոր համայնք

Ներածական մաս. Հոկտեմբերյանի խմբի ԱԿԳԽ հանքավայրի Զանֆիդա տեղամասի 4-Ա բլոկում «ՄՖ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) նախատեսում է իրականացնել օգտակար հանածոյի արդյունահանում: Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի (ընդունված՝ 2014 թվականի հունիսի 21-ին) 14-րդ հոդվածի, 4-րդ մասի, 2)-րդ կետի գ. ենթակետի՝ վերը նշված նախատեսվող գործունեությունը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության՝ որպես «Ա» կատեգորիայի գործունեության տեսակ:

Հանքավայրը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևմուտքում, Արմավիրի մարզի Նոր Արտագերս բնակավայրի վարչական սահմաններում: Զանֆիդայի ավազակոպճագլաքարային խառնուրդի տեղամասն ընդգրկված է Հոկտեմբերյանի խմբի ավազակոպճագլաքարային խառնուրդի հանքավայրերի մեջ, որի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են ժամանակակից այլուվիալ-պրոլյուվիալ նստվածքները, ավազն ու կոպճագլաքարերը, ինչպես նաև ուշ չորրորդական հասակի ավազակավային ապարները:

Տարածաշրջանում հանդիպող գրունտային ջրերը սնվում են հիմնականում արտեզյան հորատանցքերի արտանետման ջրերից և հիմնականում հանդիպում են 6-7 մ խորության վրա: Հայցվող բուն տեղամասում գրունտային ջրերը բացակայում են: Նախատեսվող գործունեության տարածքին ամենամոտ գտնվող ջրային մարմինը Արաքս գետն է՝ մոտ 3 կմ հեռավորության վրա:

Նկարագրական մաս. Հանքավայրն մոտակա բնակավայրը Զանֆիդա գյուղն է, որը գտնվում է հայցվող տեղամասից շուրջ 0.85 կմ հարավ-արևելք, որի հետ հանքավայրը կապված է բարեկարգ ավտոճանապարհով: Տեղամասի կենտրոնի աշխարհագրական կոորդինատներն են՝ $40^{\circ}03'29.10''$ - հյուսիսային լայնություն, $44^{\circ}01'35.05''$ - արևելյան երկայնություն: Տեղամասի բացարձակ նիշերը տատանվում են 855-865 մ սահմաններում: Հանքավայրի պաշարները գնահատվել են որպես լցանյութ



ծանր բետոնի արտադրության՝ պատերի սվաղի և այլ շինարարական աշխատանքների համար: Հանքավայրի ավազը և կոպճագլաքարը բավարարում են համապատասխանաբար «Խիճ և կոպիճ խիտ լեռնային ապարներից շինարարական աշխատանքների համար» 8267-95 ՀՍԳՕՏ-ի, ինչպես նաև «Песок для строительных работ» 8736-2014 ԳՕՏ-ի պահանջներին:

ՀՀ Արմավիրի մարզի Հոկտեմբերյանի խմբի ԱԿԳԽ հանքավայրի Զանֆիդա տեղամասի հաշվեկշռային պաշարները 01.01.1976թ. դրությամբ հաստատվել են ՀԽՍՀ ՊՏՀ-ի 04.08.1977թ. թիվ 231 արձանագրությամբ, A+B+C₁ կարգերով 11880.2 հազ. մ³ քանակով, այդ թվում՝ A կարգով 4850.5 հազ. մ³, B կարգով 2345.1 հազ.մ³ և C₁ կարգով 4684.6 հազ. մ³: Տեղամասը նախկինում շահագործվել է, հանքավայրի Զանֆիդա տեղամասի մնացորդային պաշարները՝ 01.01.2023թ. դրությամբ, ընդհանուր՝ A+B+C₁ կարգերով կազմում են 4294.0 հազ. մ³, այդ թվում՝ A կարգով - 80.0 հազ. մ³, B կարգով - 852.0 հազ. մ³ և C₁ կարգով - 3362.0 հազ.մ³:

Հանքավայրի Զանֆիդա տեղամասի 4-A բլոկից հայցվող տարածքի հաստատված հաշվեկշռային պաշարները նախագծով կազմում են 80000 մ³: Օգտակար հանածոյի միջին հզորությունը կազմում է 3.8 մ: Մակաբացման ապարների ընդհանուր քանակը 4-A բլոկից հայցվող տարածքում կազմում է 8183.1 մ³, իսկ մակաբացման ապարների միջին հզորությունը կազմում է՝ 0.44 մ: Նախատեսվող բացահանքի արտադրողականությունն ըստ ավազի և կոպճագլաքարային խառնուրդի զանգվածի կազմում է տարեկան 6837 մ³: Հոկտեմբերյանի ԱԿԳԽ հանքավայրի Զանֆիդա տեղամասի 4-A բլոկի շահագործման տևողությունը՝ համաձայն նախագծի հաշվարկվել է 10.3 տարի:

Հայցվող տեղամասի հիդրոերկրաբանական, լեռնաերկրաբանական պայմանները ինչպես նաև օգտակար հանածոյի սակավաթեք և փոքր խորության վրա տեղադրված լինելու հանգամանք բարենպաստ են դրա բաց եղանակով շահագործման համար:

Նախագծված բացահանքը վերջնական դիրքում կունենա հետևյալ պարամետրերը.

- բացահանքի առավելագույն երկարությունը մակերևույթում՝ մոտ 168.1 մ,
- բացահանքի առավելագույն լայնությունը մակերևույթում՝ մոտ 162.2 մ,
- մշակվող օգտակար հանածոյի հաստաշերտի միջին հզորությունը՝ 3.8 մ,
- հանքաստիճանի թեքման անկյունը՝ 45°,
- բացահանքի առավելագույն խորությունը՝ մոտ 4.24 մ,
- նախագծված բացահանքի համար օտարման ենթակա մակերեսը՝ 2.2 հա:

Հոկտեմբերյանի խմբի ավազակոպճագլաքարային խառնուրդի հանքավայրի Զանֆիդա տեղամասի 4-A բլոկից հայցվող տարածքի բացումն իրականացվելու է տեղամասի հարավ արևմտյան մասից, որտեղ բացակայում են մակաբացման ապարները: Հայցվող տարածքը շահագործվելու է միանգամից հաստվածքի ամբողջ խորությամբ՝ հակառակ բահով կահավորված էքսկավատորի միջոցով: Լեռնակապիտալ աշխատանքների (բացահանքի շինարարական շրջանի) ընթացքում նախատեսվում է նաև ջարդիչ-տեսակավորող կայանքի կահավորումը, ինչպես նաև արտադրական հրապարակի ստեղծումը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայցվող տարածքի կլիմայական պայմանները թույլ են տալիս օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների իրականացումը նաև ձմռան ամիսներին, ինչպես նաև բացահանքի տարեկան արտադրողականության ընդունված մեծությունը, սույն նախագծով ընդունված է բացահանքի շուրջտարյա աշխատանքային ռեժիմ:



Հոկտեմբերյանի խմբի ավազակոպճագլաքարային խառնուրդի հանքավայրի Ջան-Ֆիդա տեղամասի 4-A բլոկի մակաբացման ապարները (որոնց ծավալը կազմում է 8183.1 մ³ և ներկայացված են ժամանակակից այլովիալ-պրոլյովիալ նստվածքներով՝ միախառնված կոպճի և գլաքարերի բեկորների հետ) հեշտությամբ կարող են հեռացվել առանց հորատապայթեցման աշխատանքների: 4-A բլոկում նախատեսված է մակաբացման ապարների ներքին լցակույտառաջացում: Մակաբացման ապարների հեռացումը նախատեսվում է իրականացնել էքսկավատորով՝ տեղափոխելով դրանք ակզբում աշխատանքային հրապարակի հարակից տարածք: Այնուհետև հանքաստիճանի աշխատանքային ճակատի երկարությամբ (75 մ) և օգտակար հաստվածքի ամբողջ հզորությամբ օգտակար հանածոյի հանութաբարձումից հետո, մակաբացման ապարները աշխատանքային հրապարակի հարակից տարածքից էքսկավատորով անմիջապես վերալցվում է բացահանքի մշակված տարածություն՝ ձևավորելով ներքին լցակույտ: Օգտակար հանածոյի արդյունահանումը նախատեսվում է իրականացնել էքսկավատոր-ավտոինքնաթափ համակցությամբ՝ ամբողջ խորությամբ մեկ անգամից, օգտակար հաստվածքի ամբողջ խորությամբ:

Ավազակոպճագլաքարային խառնուրդը տեղափոխվում է բացահանքի մոտակայքում (տեղամասի հարավ-արևելյան մասում) նախատեսվող СМД-109 մակնիշի ստացիոնար ջարդիչ-տեսակավորող կայանքի ընդունող զետեղարան: Վերամշակման արտադրամասը СМД-109 մակնիշի ստացիոնար ջարդիչ-տեսակավորող կայանքն է, որի զբաղեցրած մակերեսը կազմում է 300-400 մ² ներառյալ ժամանակավոր պահեստի մակերեսը: Մոտեցման ճանապարհները գրունտային են, որոնք արդեն իսկ գոյություն ունեն տեղանքում:

Կայանքի աշխատանքային պրոցեսը բաղկացած է մի քանի փուլերից՝ առաջնային մշակում, երկրորդական մանրացում և ստացված նյութի համապատասխան տեսակավորում, պատրաստի հումքի մատակարարում կամ պահեստավորում՝ ըստ ապրանքի տեսակի և չափերի: Արտադրամասում բոլոր սարքավորումները շարժական են և տեղադրվելու են բացօդյա՝ առանց կառուցապատման աշխատանքների: Արդյունահանված օգտակար հանածոն բեռնատարերով տեղափոխվելով խոշոր ջարդման ընդունիչ բունկեր, այնտեղից քարի հումքը տալիս են խոշոր ջարդման այտավոր ջարդիչ: Այնուհետև խոշոր ջարդումից հետո հումքը ժապավենային փոխակրիչով տեղափոխվում է քարմաղման: Քարմաղման արդյունքում ստացվում է 4 դասի ֆրակցիաներ՝ - 5 մմ և +5 -20 մմ , +20 -25 մմ և +25 մմ խոշորությամբ: Օգտակար հանածոյի բավարար խոնավության (7-8%) պատճառով ջրով հումքի լրացուցիչ խոնավեցում չի պահանջվում: Առաջին 3 ֆրակցիան համարվում են պատրաստի արտադրանք և անմիջապես վաճառվում են կայանքի տարածքից: Խճաքարի չափերը և ելքերը կարող են փոփոխվել կախված սպառողների պահանջներից՝ քարմաղերում պահանջվող չափսի մաղերի տեղադրմամբ: Ջարդիչ-տեսակավորող կայանքից ստացված ավազը և խիճը բարձվում է սպառողների ավտոինքնաթափերի մեջ և իրացվում:

Բացահանքի մատակարարումը տեխնիկական ջրով նախատեսվում է կատարել օգտակար հանածոյի հանութաբարձման աշխատանքների ժամանակ փոշենստեցման, աշխատանքային հրապարակների, ճանապարհների ջրցանման նպատակներով: Փոշենստեցման ենթակա 2085 մ² մակերեսում ջրի ծախսը կկազմի 625.5 մ³ և Տեխնիկական ջրամատակարարումը նախատեսվում է կազմակերպել ջրցան վացող



մեքենայով: Խմելու ջրի մատակարարումը նախատեսվում է իրականացնել BL-1.2 մակնիշի ջրի ցիստեռնով: Բացահանքում ջրհեռացնող կառուցվածքներ չեն նախատեսվում: Անմիջապես բացահանքի տարածքը թափվող անձրևային ջրերը հեռացվում են ինքնահոս կերպով՝ ներծծվելով ճեղքերի միջով կամ կուտակվելով տեղամասում առկա լճակներում: Արտադրական տարածքի կենցաղային կեղտաջրերը կուտակվելու են բետոնապատ անջրթափանց հորում, որտեղից պարբերաբար կհեռացվեն հատուկ ծառայության ուժերով:

ԱԿԳԽ-ի վերամշակման գործընթացում ավազային ֆրակցիայի լվացման համար (1 մ³ ավազային զանգված լվանալու համար անհրաժեշտ կլինի 0.8-1.0 մ³ ջրի ծախս) անհրաժեշտ ջրօգտագործումը կիրականացվի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ համապատասխան թույլտվություններ ստանալուց հետո:

Հանքում մթնոլորտ արտանետվող վնասակար գազերի և փոշու աղբյուր են հանդիսանում՝ տրանսպորտը և հանութային աշխատանքները: Օդային ավազան արտանետվող վնասակար նյութերն են՝ անօրգանական փոշին (բուլդոզերային, էքսկավատորային, տրանսպորտային, լցակույտ) ազոտի ու ածխածնի օքսիդները և ածխաջրածինները (դիզելային ու բենզինային վառելիքով աշխատող մեխանիզմներ): Մթնոլորտում վնասակար նյութերի ցրման հաշվարկների արդյունքերի համաձայն, որ սպասվելիք գետնամերձ կոնցենտրացիաները գտնվում են բնակելի գոտիների համար սահմանված նորմերում:

Օգտակար հանածոյի արդյունահանման ենթակառուցվածքների (բացահանք, արտադրական հրապարակ, ջարդիչ կայանք) ստեղծման արդյունքում ժամանակավորապես օտարվելու է մոտ 2.2 հա տարածք: Քանի որ հայցվող տեղամասի մակաբացման ապարները ներակայացված են այլովիալ-պրոլյուվիալ նստվածքներով, հողի բերրի շերտի պահպանության միջոցառումներ չեն նախատեսվում: Մակաբացման ապարները էքսկավատորով անմիջապես վերացվում են բացահանքի մշակված տարածություն /ձևավորելով ներքին լցակույտ/ տեխնիկական ռեկուլտիվացիայի նպատակով:

Հոկտեմբերյանի խմբի ավազակոպճագլաքարային խառնուրդի հանքավայրի Ջանֆիդա տեղամասի 4-A բլոկի շահագործման արդյունքում շրջակա միջավայրին հասցվող վնասը ընդհանուր /մթնոլորտային օդ, հողային ռեսուրս/ կկազմի՝ 64472 հազ. դրամ:

Հանքավայրի լեռնակապիտալ աշխատանքների և շահագործման ընթացքում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունները կանխարգելելու և մեղմելու նպատակով մշակվել են բնապահպանական միջոցառումների ծրագիր, ուղղված՝ մթնոլորտային օդի, հողային, ջրային ռեսուրսների, կենսաբազմազանության պահպանությանը, այդ թվում՝

- փոշենստեցման նպատակով փոշեառաջացման օջախների (աշխատանքային հրապարակ, ավտոճանապարհ) պարբերաբար ջրում տարվա չոր և շոգ եղանակներին,
- տեխնիկատրանսպորտային միջոցների աշխատանքի ապահովում ձայնախլացուցիչ սարքավորումներով՝ աղմուկի մակադակի նվազեցման նպատակով,
- տեխնիկա-տրանսպորտային միջոցների երթևեկության բացառում ճանապարհներից ու արտադրական հրապարակներից դուրս,
- դիզելային շարժիչներով աշխատող լեռնատրանսպորտային սարքավորումների վրա գոտիների տեղադրում՝ արտանետումների նվազեցման նպատակով,
- արտադրական հրապարակում նավթամթերքների պահեստավորում և պահում



հատուկ հատկացված տեղում,

- օգտագործված յուղերի ու քսայուղերի հավաքում առանձին տարաների մեջ՝ երկրորդական վերամշակման համար,
- հնամաշ դետալների ու մասերի հավաքում և հանձնում որպես մետաղական թափոն,
- խախտված տարածքների վերականգնում/ռեկուլտիվացիա:

Ռեկուլտիվացիոն վերջնական աշխատանքները կկատարվեն արդյունահանման աշխատանքների ավարտին: Բացահանքի մշակված տարածության տեխնիկական ռեկուլտիվացիան կիրականացվի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքներին զուգընթաց, իսկ կենսաբանական ռեկուլտիվացիոն աշխատանքները կկատարվեն արդյունահանման աշխատանքները ավարտելուց հետո: Ռեկուլտիվացիոն աշխատանքների տեխնիկական փուլն ուղեկցվում է մակաբացման ապարների անմիջապես բացահանքի մշակված տարածություն վերալցմամբ՝ փոշուով բացահանքի հատակին: Հարթեցումը կկատարվի անիվավոր բարձիչի օգնությամբ: Կենսաբանական փուլի ժամանակ նախատեսվում է ճիմապատել այն և հետագայում օգտագործել այն գյուղատնտեսական նպատակներով: Ռեկուլտիվացիայի ենթակա՝ 21800 հա մակերեսում լեռնատեխնիկական և կենսաբանական ռեկուլտիվացման ծախսերը կկազմեն՝ $1081.92 + 1009.2 = 2091.1$ հազ. դրամ << դրամ, որի մեջ մտնում են՝ լեռնատեխնիկական և կենսաբանական ռեկուլտիվացիայի իրականացման աշխատավարձերի, օգտագործվող նյութերի, տրանսպորտի և մեղմացման միջոցառումների համար նախատեսված ծախսատեսակները:

Ընկերության կողմից, արդյունահանմանը զուգընթաց իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների կանխարգելմանն ու մեղմմանն ուղղված մշտադիտարկումներ, որոնք ներառվել են բնապահպանական մշտադիտարկումների պլանում և որպես օբյեկտներ դիտարկվել են՝ մթնոլորտային օդը, հողային ծածկույթը, կենսաբանական միջավայրը և սոցիալական միջավայրը /ներառյալ՝ աղմուկ, թրթռում/: Մշտադիտարկումների իրականացման համար տարեկան ծախսը կազմում է 200 հազ. << դրամ:

ՇՄԱԳ-ում նախատեսվել են միջոցառումներ՝ ուղղված աշխատանքային միջավայրում աշխատողների անվտանգությանը, արտակարգ իրավիճակների արձագանքմանը, հրդեհային անվտանգությանը, հնարավոր սոցիալական ազդեցությունների մեղմմանն ու կանխարգելմանը: Բոլոր միջոցառումներն իրենց գործողություններով ամփոփվել են բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում:

ՇՄԱԳ-ում նախատեսվել են նաև միջոցառումներ՝ ուղղված ՇՄԱԳ-ում կենսաբազմազանության պահպանությանը կամ հնարավոր ազդեցությունների մեղմացմանը կամ կանխարգելմանը: Համաձայն կենսաբազմազանության վերաբերյալ ներկայացված ՇՄԱԳ-ում ներկայացված տեղեկատվության՝ գործունեության տարածքում պահպանության կարիք ունեցող, վտանգված, խոցելի, անհետացման եզրին գտնվող և << Բույսերի կարմիր գրքում գրանցված տեսակները բացակայում են: Հանքավայրի տարածքը, ինչպես նաև հարակից շրջանները ներառված չեն բնության հատուկ պահպանվող, բնության հուշարձանների և պատմամշակութային հուշարձանների տարածքներում:

Եզրափակիչ մաս: Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ հաշվետվության փորձաքննությունն իրականացվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության



գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի պահանջներով: Գնահատման և փորձաքննության փուլերում Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Նոր Արտագերս բնակավայրում անցկացվել են հանրային քննարկումներ: Քննարկման ընթացքում մասնակիցների կողմից գործունեության իրականացումն արժանացել է հավանության, բարձրացված հարցերին տրվել են պատասխաններ, կարևորվել է արդյունահանման աշխատանքների ընթացքում ազդակիր բնակավայրից աշխատատեղերի ստեղծումն ու Ընկերության կողմից համայնքում սոցիալական ծրագրերի իրականացումը:

Փորձաքննական գործընթացին մասնակցել են առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի, սպորտի և ներքին գործերի նախարարությունները, կադաստրի կոմիտեն, Կոտայքի մարզպետարանը, տեղական ինքնակառավարման մարմինները, շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներ, որոնց կողմից ներկայացված կարծիքները ևս հաշվի են առնվել փորձաքննության գործընթացում և ՇՄԱԳ հաշվետվության լրամշակումներում:

Վերլուծելով նախագծային փաստաթղթերի և ՇՄԱԳ հաշվետվության փորձաքննության և հանրային քննարկումների արդյունքները, պետք է փաստել, որ շրջակա միջավայրի պահպանության և սոցիալական հնարավոր ազդեցությունների կանխարգելման տեսանկյունից նախատեսվել են բավարար միջոցառումներ և գործողությունների ծրագիր: ՇՄԱԳ հաշվետվությունում ներկայացված բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի գործողությունների իրականացման արդյունքում, հանքավայրի շահագործման ընթացքում աղտոտվածությունը օդային և ջրային ավազանների, հողային ռեսուրսների, ինչպես նաև կենսաբազմազանության վրա կգտնվի թույլատրելի նորմերի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

1. Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է ապահովել և պահպանել նախագծային փաստաթղթերում ներկայացված տեխնոլոգիական լուծումների և ՇՄԱԳ հաշվետվությունում ամրագրված բնապահպանական պահանջների կատարումը, ինչպես նաև Նոր Արտագերս բնակավայրում Ընկերության կողմից նախատեսված սոցիալական ծրագրերի իրականացումը:

2. Հումք տեղափոխող մեքենաներն անհրաժեշտ է բեռնավորել սահմանված չափով՝ հնարավոր սոցիալական ազդեցություններից և ավտոճանապարհների վրա ծանրաբեռնվածությունից խուսափելու նպատակով:

3. ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմին»:

4. Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի «Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» N 191-Ն




որոշման պահանջներով, շրջակա միջավայրի բաղադրիչների (մթնուլորտային օդ, հողային ծածկույթ, կենսաբազմազանություն) մշտադիտարկումների արդյունքների տարեկան հաշվետվությունը նշված որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել լիազոր մարմին:

5. Ընկերությունը ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով շրջակա միջավայրի նախարարություն պետք է ներկայացնի հայտ՝ ջրօգտագործման թույլտվություն ստանալու համար:

6. Գործունեության իրականացման ընթացքում անհրաժեշտ է ապահովել և պահպանել բնապահպանական կառավարման պլանում նախատեսված միջոցառումների իրականացումը (կարևորելով փոշենստեցման նպատակով պարբերաբար ջրցանը) և դրանց իրականացման ժամանակացույցերը:

ԵՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՄՖ ՔՈՆՍԹՐԱԲՇՆ» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված Արմավիրի մարզի Հոկտեմբերյանի խմբի ավազակոպճագլաքարային խառնուրդի հանքավայրի Զանֆիդա տեղամասի 4-A բլոկի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝  Հերիքազ Մկրտչյան

